

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ—ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ

ՆՈՐ—ՆԱԽԻՋԵՒԱՆԻ
ՈՒՍՈՒՄՆԱՐԱՆԱԿԱՆ ԳՈՐԾԻ ԱՆՑԵԱԼԸ,

(Շարունակութիւն).

4.

Սակայն խալֆայականութիւնը հայերի մէջ մինչև վերջը շարունակուել չէր կարող, Հայերը, թէև դժբաղդ քաղաքական հանգամանքներում, բայց և այնպէս, ինչպէս աչքաբաց ժողովուրդ, շուտով ծանօթացան Եւրոպային. վաճառականները սկսան երթնել Եւրասիոյ երկիրները, ուսման ծարաւի երիտասարդները, ինչպէս դեռ հին ժամանակները սովորութիւն ունէին՝ դիմեցին Եւրոպա ուսում ստանալու և Եւրոպայի ազդեցութիւնը, թէև թոյլ, դանդաղ կերպով, բայց և այնպէս սկսաւ կամաց—կամաց տարածուել Հայոց կեանքի մէջ ընդհանրապէս և Հայոց դպրոցների մէջ մասնաւորապէս: Ինչ ասել կուզէ, որ այդ դեպքում հայկական գաղութները, իբրև նիւթականապէս աւելի ապահովուած, իբրև լուսաւորեալ երկրներին աւելի մօտ և նոցա մէջ ապրող հայ ժողովրդի մի մասն, առաջընթաց եղան և իւրեանց մայր երկրի վերաբերութեամբ սկսան միջնորդի դեր կատարել, նոքա դարձան մի տեսակ հայկական լուսաւորեալ կենտրոններ, որ տեղից զանազան շառաւիղներով եւրոպականութիւնը տարածուեցաւ Հայաստանի խորքերը: Զմիւռնան ու Պոլիսը առաջնորդեցին Տաճկահայոց, Մոսկովը, Պետերբուրգը, Թիֆլիսը Ռուսահայոց, իսկ Լնդկաստանը Պարսկահայոց: Խալֆայականութիւնը, որ այն աստիճան խոր արմատներ էր թողել մեր կեանքում, որ մինչև ցայսօր դեռ մեր գիւղացիք զանգատուում են թէ թողած աստուածային բաները, իշու, խողի մասին են դաս տալիս դպրոցում, սկսաւ աստիճանաբար տեղի տալ, Բայց մեր ուսումնարանական գործի այդ փոփոխութիւնը Հայաստանի բոլոր մասերում միաժամանակ առաջ չեկաւ, որովհետև հայերը երբ տէրութեան հպատակ լինելով, նոցա ուսումնարանական գործն էլ, ինչպէս նոցա կեանքի և միւս բոլոր երևոյթները ենթարկուած են այդ տէրութիւնների քաղաքակրթութեան ազդեցութեան: Տաճկահայոց մէջ այդ փոփոխութիւնը աւելի կանուխ սկսուեցաւ, քան թէ միւս մասերում: Պարսկահայոց և մինչև անգամ Ռուսահայոց մէջ, Անկասկած դորա պատճառն այն չէր, որ Տաճկաստանը աւելի քաղաքակրթուած էր, քան Ռուսաստանը, որովհետև յայտնի է, որ նա իւր նախ-

նական գրութիւնից, իբրև մահճատական երկիր մինչև ցայսօր դեռ դուրս չէ եկել, այլ այն աշխարհագրական դիրքը, որ ունին նորա երկու քաղաքները՝ Պոլիսը և Զմիւռնան, Այդ երկու քաղաքները միշտ Եւրոպական ազդերի թէ քաղաքական և թէ առևտրական գործունէութեան մեծ ասպարէզ են եղել, նոքա գտնուելով Տաճիկների իշխանութեան տակ, միշտ աւելի եւրոպական, քան թէ ասիական կեանք ու կերպարանք են ունեցել:

Քրանսիական լեզուն և քաղաքական կեանքը, իբրև մի ազդի կեանք ու լեզու, որ միւս եւրոպացիներից աւելի կանուխ է ազդեցութիւն ձգտել ձեռք բերել արևելքում այդ կենտրոններում միշտ ժողովրդականութիւն է վայելել, Հայ գաղթականները, իբրև լուսաւորութիւն սիրող ժողովուրդ, անկասկած չէին կարող անմասն մնալ իւրեանց չորս կողմը եռացող եւրոպական կեանքից, նոքա շուտով իւրեանց կեանքի մէջ մտցրին, որ յայտնի բան է, առանց ազդեցութեան չէր կարող մնալ և նոցա ուսումնարանական գործի վերայ: Միւս կողմից էլ Տաճկահայոց գաղութների վերայ ազդեցին Միսիսթարեանք և նոցա ձեռքով հաստատուած Ռափայէլեան, Մուրատեան և Հայկազեան վարժարանները, բայց դժբաղտաբար այդ եւրոպական ազդեցութիւնը ճանապարհների հաղորդակցութեան պակասութեան և տէրութեան բարբարոս կառավարութեան պատճառով միայն մնաց այդ կենտրոններում և մասամբ ևս տարածուեցաւ Անատոլիոյ հայ գաղութների վերայ, իսկ բուն Հայաստան չմտաւ: Իսկ Պարսկահայոց ուսումնարանական գործի փոփոխութեան սկիզբը համեմատաբար շատ ուշ եղաւ, քան թէ Ռուսահայոցը կամ Տաճկահայոցը, որովհետև Պարսկաստանը, իբրև մահճատական երկիր, ունենալով լուսաւորութեան բոլոր արգելափակիչ պատճառները, չունէր այն նպաստաւոր հանգամանքները, որ ունէր Տաճկաստանը: Նա իւր աշխարհագրական դիրքով բաժանուած լինելով Եւրոպայից, համարեա բոլորովին զրկուած էր լուսաւորեալ ազգերի ազդեցութիւնից: Պարսկահայոց վաճառականներն էլ, յայտնի բան է, հասնում էին Եւրոպա և իւրեանց երկիրն էին բերում եւրոպականութիւնը:

1. 1790 թ. Շուրցը Մկրտիչ ամիրան Պոլսի զանազան թաղերում հասարակաց դպրոցներ հաստատեց: Դորանից առաջ 1775 թ. Զմիւռնայում հաստատուել էր Ս. Մեսրոպեան դպրոցը: Իսկիւղարի ճեմարանը, որ Պոլսի առաջին մեծ եւ կանոնաւոր դպրոցն է համարուում, բացուեցաւ 1838 թ. Պալեան Կարապետ ամիրայի ձեռքով:
2. Բուն Տաճկահայաստանի առաջին կանոնաւոր դպրոցը պէտք է համարել Չարազայ վանքինը, որ հիմնուեցաւ Հայրիկի ձեռքով 1858 թ.:

Լնդկաստան գաղթած ջուղայեցիներն էլ ազգում էին իւրեանց հայրենակիցների վերայ՝ բայց այդ ազգեցումիւնը այնքան շնչին էր, որ չէր կարող մի զգալի փոփոխութիւն մտցնել Պարսկաստան խալֆայականութեան մէջ, Երևանցի Մետրոպ Քաղտա- գեանի ձեռքով բարեփոխած նոր—Քուղայի կարծա- տե դպրոցը շատ բան չէր կարող անել, եթէ միայն օգնութիւն չհասնէին Ռուսաստանը և Ատրպատա- կանի առաջնորդի ձեռքով սկիզբը շնչէին նոցա ու- սումնարանական գործի փոփոխութեան, Այսպիսով ահա հայոց ազգի երեք մասից Ռուսաստանն եղան առաջինը, որ հին ուսումնարանական շրջանի փո- փոխութեան հիմքը դնելով, անընդհատ կերպով աստիճան առ աստիճան շարունակեցին բարեփոխել ու կանոնաւորել դպրոցները և նոցա մէջ տիրող կարգ ու կանոնը, մինչև որ մեր օրերը կարողացան նորան մի յայտնի աստիճան կատարելութեան հասցը- նել, Ռուսաստանը ուսումնարանական գործի փոփոխ- ուելուն նպատակցին—նախ ինքը տէրութիւնը, որ կեանքի և գոյքի ապահովութիւն տալով հայ ժո- ղովրդին, գործնով միջոց տուեց նորան, բացի իւր առօրեայ պիտոյքը հոգալուց, մտաւոր կրթութեան վերայ ևս ուշադրութիւն դարձնել, բացի սորանից, նա հայ մանուկներին գրկաբաց ընդունելով արքունի դպրոցները, հայաբնակ քաղաքներում ևս դաւա- ոական դպրոցներ բանալով, մասնակից արեց հայե- րի կրթութեան այն մեծ հոգսին, որ մուտ էր գոր- ծում Եւրոպայից Ռուսաստան, և երկրորդ՝ Ս. Էջմիածինը, որին կարծես՝ ինքը նախախնամութիւ- նըն էր յանձնել առաջնորդելու հայ ազգին դէպի լուսաւորութիւն, Ս. Էջմիածնի Գահակները, որոնք տէրութիւնից հաստատուած օրէնքով ևս ճանաչուե- ցան պարագլուխ հայոց ուսումնարանական գործին, իւրեանց բոլոր ճիգը թափեցին արդարացնելու իւր- եանց վերայ դրուած ազգի յոյսերը, Աթուղիկոս- ները հայոց եկեղեցու գլուխն են, իսկ դպրոցները եկեղեցու նախագահութիւնը, չէ՞ որ նոքա պէտք է աշ- խատէին դպրոցները կանոնաւորել, որ ծաղկեն և եկեղեցիները, Երջանկայիշատակ ներսէս, Մատթէ- ոս, Կէնորդ կաթուղիկոսներն Ռուսաստանը ուսում- նարանական գործում՝ ունեցած մասնակցութեամբ անմահացրին իւրեանց անունը, նախ բարեկարգուե- ցաւ, ըստ կարեաց, Ս. Էջմիածնի ժառանգաւորաց դպրոցը, կարճ միջոցում զարմանալի փոփոխութիւն եղաւ, բացուեցան ներսիսեան, Երևանի, Արցախի դպրոցները, Ռուսաստանի մէջ մտաւոր շարժում սկսաւ, զարթեցաւ ուսումնասիրութեան հոգին և հայ պատանիները խումբ—խումբ դիմեցին Թիֆլի- սի միջնակարգ դպրոցները, մայրաքաղաքների և Գորպատի համալսարանները և մինչև անգամ ար-

տասահման, նամանաւանդ այս դէպքում մեծ գործ տեսաւ Լազարեան ճեմարանը, որ բացուած լինե- լով գլխաւորապէս հայերի համար, շատ կրթուած մարդիկ տուեց մինչև անգամ Ռուսաստանի ամենախուլ անկիւններում ապրող հայերին, Արոնք ցրուելով ժողովրդի մէջ՝ տարածեցին մեր երկրում ուսման ճաշակը և դպրոցական գործի մէջ կանոնա-ւոր հայեացք մտցրին, Մեր ուսումնարանական գոր- ծը այս ընդհանուր մտաւոր շարժման մէջ, յայտնի բան է, անփոփոխ չէր կարող մնալ, Ս. Էջմիածնի վեհապետների անհուն ճիգը և հայ դպրոցներում ու տէրութեան ու բարձրագոյն դպրոցներում և, Աերջապէս, Լազարեան ճեմարանում աւարտած ե- րիտասարդների խումբը ազգեցին ուսումնարանական գործի հին սիստեմի վերայ և պատրաստեցին այն հողը, որի վերայ երջանկայիշատակ Մատթէոս Ա- թուղիկոսը 1859 թուականին դրեց առաջին կանո- նաւոր ծխական դպրոցի հիմքը:

5.

Ռուսաստանը բոլոր թեմերում՝ ևս ուսումնա- րանական գործի կանոնաւորուելը միևնոյն ժամանակ չեղաւ, Այդ դէպքում նախիջևանի և Բեսսարա- բիոյ վիճակի դրութիւնը աւելի նախանձելի պէտք է համարել, որովհետև 57 թուականից այդ թեմին Ադէքսանդր Բ. կայսեր առանձին հաճութեամբ նշա- նակուած է առաջնորդ Միսիթարեաններից դեռ 53 թուականին բաժանուած նշանաւոր Այվազեան վար- դապետը, որ իրը կրթութեամբ մարդ ուսման յարգը լաւ էր ճանաչում, Գործելն էլ հեշտ էր, որովհե- տև նախիջևանու, ինչպէս Ռուսաստանը և միւս վի- ճակներում, դպրոցական գործը կանոնաւորելու հա- մար հողը բոլորովին պատրաստ էր, Լազարեան ճե- մարանը դեռ շատ առաջ նախիջևանցի մանուկներից պատրաստել էր քաղաքի համար մի խումբ կրթութեամբ մարդիկ, որոնք վերագառնալով, տարածել էին քա- ղաքիս հասարակութեան մէջ ուսման սէրը, 37 թը- ուականներից հիմնուած էր արքունի դաւառական դպրոցը—Խոնախը, որ այդպէս էր կոչուում իւր շէնքի անունով, և որ այժմուայ Ս. Սահակայ և Մես- րոպայ քաղաքային դպրոցն է, նոյնպէս, յայտնի բան է, առանց հետեանքի չէր մնացել, նամանա-ւանդ որ այդ դպրոցը իւր այն ժամանակուայ միա- պաղաղ հայկական տարրով և հայոց լեզուի և կրո- նի պարտականացուցիչ դասատուութեամբ միանգա- մայն աղգային դպրոցի էր նմանում, Ժողովուրդը արդէն այնքան սէր էր կապել ուսման, որ չէր բա-ւականանում իւր ունեցած խոնախով և խալֆայա- կան ուսումնարաններով, նա կարծես զգում էր

իւր ունեցածի պակասութիւնը, ձգտում էր այդ բարեփոխել և կանոնաւորել: Այդ նպատակով էր ահա որ մեծամեծ ծախսեր անելով, նա ուղարկում էր իւր զաւակներին Ճեմարան, այդ նպատակով էր նոյնպէս, որ ուրիշ տեղերից հրաւիրում էր ուսուցիչներ՝ Նախիջևան, Այսպէս հրաւիրուածներից նշանաւոր էին երկուսը, Մոսկովի համալսարանի բանասիրական բաժնում աւարտած Լազարեան Ճեմարանի նախկին աշակերտ Աստուածատուր Խաղամեանը, որի մօտ դաստիարակուեցան Հայրապետեանը և նորա հասակակիցները, և վերոյիշեալ Պոլսեցի Մնասիր Սերովբէ վարժապետը, որի մօտ դաստիարակուեցաւ մի ամբողջ սերունդ, որոնց թուից էր և նորա որդին Տէր Գարրիէլ Պատկանեանը, որ նոյնպէս ուսուցիչ եղաւ՝ Նալբանդեանցին և նորա հասակակիցներին, Խաղամեանի և Սերովբէ վարժապետների գալը մի մեծ դարազուլտ է եղել՝ Նախիջևանցոց համար, Ենձ պատմել են, որ Խաղամեանը այնքան հետաքրքրութիւն է զարթեցրել ժողովրդի մէջ, որ երբ նա փողոցներից անցնելուս է եղել, բոլոր պատուհանները և դռները բացուել են, ամէնքը հետաքրքրուել են տեսնել այդ աշխարհական Մոսկովից եկած հայ վարժապետին, մինչև այդ ժամանակը՝ Նախիջևանցիները տեսած են եղել տէրտէր, տիրացու վարժապետներ և զանազան տեղական տգէտ վարժապետներ, Զպէտք է մոռանանք, որ Նախիջևանի դպրոցական գործի կանոնաւորուելուն, թէև աւելի յետագայ ժամանակներում, մեծապէս նպաստել են Նախիջևանի կրթուած երիտասարդներից երկուսը՝ Սարգիս Տիգրանեանը, որի գործունէութիւնը ամբողջութեամբ պատկանում է Այվազեանի շրջանին, իբրև խոնարհ ուսուցիչ, Խալիբեան դպրոցի ուսուցիչ, տեսչի օգնական և տեսուչ, Տէր-Խաչատուր Զարիֆեան քահանայ, որի գործունէութեան մի փոքր մասը պատկանում է Այվազեանի, իսկ գլխաւոր մասը Գէորգ կաթուղիկոսի շրջանին, Բայց դժբաղդաբար կրթուած մարդ լինելը, ուսման յարգը ճանաչելը դեռ չէ նշանակում ժողովրդի մէջ գործել իմանալ, ժողովրդի ցանկութիւններին և կարիքներին ընդ առաջ գնալ, ինչպէս որ իւր գործունէութեամբ լիովին ապացոյց տուեց Այվազեանը, Աւսեալ առաջնորդը փոխանակ իւր գործունէութիւնը կենտրոնացնելու՝ Նախիջևանում և նորա շրջակայ գիւղերում, իբրև թեմի ամենաբազմահայ տեղերում, փոխանակ գիւղերում ծխական դպրոց բանալու, իսկ քաղաքում և ծխական դպրոցներ և մի մեծ կենտրոնական դպրոց, իւր բոլոր աշխատանքն ու ուշադրութիւնը դարձնում է Խալիբեան դպրոցի վերայ և այդպիսով իւր առաջնորդութեան բոլոր եօթ տար-

ուայ գործունէութեամբ կազմում է մի կատարեալ քիւնա իւր կաթուղիկոսի հետ, որ իւր նոյնքան տարուայ կաթուղիկոսութիւնը գործ է դնում ժողովրդական դպրոցների բարեօրջան գործի վերայ, ժողովրդից հոգաբարձութիւններ հաստատելով և դպրոցների մերձաւոր հսկողութիւնը նորան յանձնելով: Աս հետի եմ երջանկայիշատակ կաթուղիկոսի և հանգուցեալ առաջնորդի գործունէութեան մէջ եղած այդ դիտնանսի պատճառները քննելու, հետի եմ նոյնպէս ժխտելու Խալիբեան դպրոցի նշանակութիւնը Բեսսարաբիոյ թեմի համար ընդհանրապէս և Նախիջևանի մասնաւորապէս, բայց չեմ կարող այստեղ շեշտելով չասել, որ ուսեալ առաջնորդը Նախիջևանի եկեղեցական դուստրները և եկեղեցիների եօթ տարուայ ընթացիկ արդիւնքը ծախսելով Խալիբեան դպրոցի վերայ, քաղաքիս դպրոցները, եթէ ոչ ընդմիշտ, գոնէ, շատ երկար ժամանակ, զրկեց հաստատ եկամտի աղբիւրներից և դատապարտեց մեզ մուրդուութեան, Աս համարել եմ, Խալիբեան դպրոցը իւր գոյութեան 12—13 տարուայ ընթացքում՝ Նախիջևանին տուել է միայն 38 աշակերտ, այն էլ մեծամասնութիւնը կիսաւարտ, Հանգուցեալ Այվազեանը իւր Խալիբեան դպրոցի պատմութեան մէջ քանիցս շեշտելով յիշում է, որ նա իւր թեմում ժողովրդական դպրոցներ է բաց արել, բայց յակննէ անուանէ չէ թուում նոցա, մենք առհասարակ տեղեկութիւն չունենք նորա թեմում բաց արած դպրոցների մասին, բացի Թէոգոսիոյ օրիորդաց դպրոցից, բայց լաւ գիտենք, որ Նախիջևանում և նորա գիւղերում նա ոչ մի դպրոց չէ բացել, ճիշդ է, նորա ժամանակ Խալիբեանը ցանկացել է Ս, Խաչում իւր ծախքով դպրոց հիմնել, բայց Խալիբեան դպրոցի շէնքի վերայ աւելի ծախսելով, քան թէ նա մտքում դրել էր, թողել է իւր առաջուայ մտադրութիւնը, և առաջնորդը հարկաւոր չէ համարել աղային հասկացնելու, որ Ս, Խաչում դպրոցը աւելի կարեւոր ու նպատակայարմար է, քան թէ Թէոգոսիոյ դպրոցի համար հոյակապ պալատ շինելը, Եղել է մի ժամանակ ևս, երբ առաջնորդը Նախիջևան գալով, առաջարկել է քաղաքացոց մի շորս դասարանից բաղկացած դպրոց բանալ, բայց այդ էլ եղել է ոչ թէ իւր կամքով և հեղինակութեամբ, այլ տէրութեան, որ կարծելով թէ Նախիջևանցիք իւրեանց առաջնորդի դէմ բողոքում են գլխաւորապէս միայն նորա համար, որ նա Նախիջևանը թողնելով, դպրոցը Թէոգոսիայումն է շինել, հրամայել էր Նախիջևանում ևս մի դպրոց բանալ, Առաջնորդի այդ առաջարկութիւնը իրականութիւն չստացաւ, որովհետև կրքերը այն աստիճան յուզուած էին, խոսվու-

Թիւնները այն աստիճան ծայրայեղութեան էին հասել, որ առաջնորդի ամենալաւ դիտաւորութիւններն անգամ դէպի վատն էին մեկնուում: Եւ վերջապէս արդարացի էլ պէտք է լինել դէպի նախիջեւանցիք. նորա ինչով պէտք է պահէին այն դպրոցը, ո՞չ ապաքէն ոչ միայն բոլոր եկեղեցական գումարները արդէն ծախսուած էին Խալիբեան դպրոցի վերայ, այլ և նոցա ընթացիկ արդիւնքը ևս: Ահա այս պատճառով երջանկայիշատակ Մատթէոսի կաթողիկոսութիւնը, որ Մուսահայոց բոլոր թեմերում ուսումնարանական գործի կանոնաւորելու վերաբերութեամբ ունեցաւ իւր որոշ ազդեցութիւնը, համարեա թէ անօգուտ անցաւ նախիջեւանի համար: Այն ժամանակուայ բոլոր թեմական առաջնորդներից ամենագիտնական և ամենակրթուած Այվազեանը շարդարացրեց ժողովրդի յոյսերը, եթէ, յայտնի բան է, չհամարենք Խալիբեան դպրոցը, որ աւելի ընդհանուր նշանակութիւն ունէր, քան թէ մասնաւոր տեղական, և նախիջեւանի ուսումնարանական գործի կանոնաւորուելը յետաձգուեցաւ մինչև երջանկայիշատակ Գէորգ Գ-ը, որ համարուում է քաղաքիս ուսումնարանական գործի իսկական կանոնաւորողը, իսկական հիմնադիրը, 1868 թուականն էր, որ դպրոցասէր կաթողիկոսը եկաւ Բեսսարաբիոյ թեմը և այցելեց նախիջեւանը. նորա մէկ հրամանով բացուեցան դիւղերի ծխական դպրոցները, քաղաքիս Ս. Համբարձման, Ս. Թէոգորոսի, Ս. Եստուածածնի ծխական դպրոցները և Ս. Խաչի ժառանգաւորաց դպրոցը, որի պահպանութեան համար հաստատեց Մարդասիրական ընկերութիւնը, Բայց կաթողիկոսի գիտաւորութիւնները նախիջեւանի համար գորանով միայն չսահմանափակուեցան. նա անձամբ տեղ նշանակեց Ս. Լուսաւորիչ եկեղեցու սրահում, ուր մօտ ապադայում մտադիր էր մի մեծ հոգևոր դպրոց հիմնել, որ պիտի լինէր քաղաքի և դիւղերի ծխական դպրոցների աշակերտների համար կատարելագործուելու մի կենտրոն: Այդ այն դպրոցն էր, որ յետոյ 69 թուականին հիմնուեցաւ Գէորգ Տէր Մկրտչեան առաջնորդի օրով և Տէր-Խաչատուր Զարիֆեանի տեսչութեամբ, ժողովուրդը նորան կոչում էր «Պառավարութեան դպրոց», որովհետև մինչև Ս. Լուսաւորչի սրահում Ա. Նահափառի նշանակած տեղում դպրոցի շէնք շինելը, նա ժամանակաւորապէս տեղաւորուած էր Հոգևոր Պառավարութեան կից շինուածքում:

Հեռատես կաթողիկոսի սրատես աչքից շխուտափեց և Խալիբեան դպրոցը, որ այդ ժամանակ իւր օրհասի մէջ էր. նա կամեցաւ հանել նորան «յանորոշ և ի կեղակարծ գրութեանէ անտի», յոր անկեալ դնէր սակս պէսպէս պատճառանաց» և թեմական ժառանգաւորաց դպրանոցի վերածելով նորան, դորանով պսակել այն գործը, որի հիմնադիրն էր եղել մեր թեմում: Այդ նպատակով նա սկսաւ բանակցել տէրութեան և Խալիբեան Յարութիւն ազայի հետ, Գործը երկարեց մինչև 71 թ., երբ տէրութիւնը, մինչև անգամ չընդունելով Խալիբեանի յօժարութիւնը ուսումնարանը բոլորովին նախարարութեան յանձնելու գիմնագիտն դարձնելու համար, փակեց դպրոցը, յանձնելով շէնքը իւր բոլոր պարագաներով կարասիքով, տպարանով, գրասենեակով, ինչպէս եկեղեցական փողով շինուած ու ձեռք բերուած, կաթողիկոսին կամք տալով նորան դպրանոցի փոխելու, Գործը ծանր էր, լիովին ժառանգաւորաց դպրանոց պահելու համար Այվազեան եպիսկոպոսի կաթողիկոսի առաջարկութեամբ կազմած երկու նախագծի համեմատ հարկաւոր էր առ նուազն 26—22 հազար ռուբլի տարեկան ծախս, որ վիճակը չէր կարող հոգալ: Սակայն դպրոցական գործում անխնջ կաթողիկոսը մինչև անգամ այդ ամենադժուար արգելքի առաջ չկանգնեց. նա դիմեց Այվազեանի միջոցով Խալիբին, իսկ նրա մահից յետոյ նորա ժառանգներին, որոնք, թէև խոստանում էին տարեկան 4500—6000 ռուբլի տալ, բայց այնպիսի պայմաններ էին առաջարկում, որ համարեա անկարելի էր ընդունել՝ Այվազեանը տեսուչ լինի, դպրանոցը Խալիբեան կոչուի, ժառանգներից մէկը սերնդէ սերունդ պատուաւոր հոգաբարձու լինի, բայց որ գլխաւորն է, վիճակային արդիւնքից իւրաքանչիւր տարի լրացուի դպրանոցի ծախսը, Այս միջոցին էր ահա, որ նախիջեւանցիք իմանալով տէրութեան Խալիբեան դպրանոցի վերաբերմամբ արած կարգաւորութեան և կաթողիկոսի նոյն դպրոցի վերաբերութեամբ ունեցած դիտաւորութեան մասին, Պլոտնիկով երէցփոխի նախագահութեամբ հասարակային ժողով կազմեցին նոյն 71 թուականին և խնդրեցին կաթողիկոսից, որ Խալիբեան դպրոցը տեղափոխուի նախիջեւան, խոստանալով տալ «զպատկանեալն հասարակութեան զերկյարկ տուն քարաշէն ամենայն շինուածովքն, որ առ նմա ի զետեղումն դպրանոցին յիւրումն ամբողջ կազմութեամբ, ցորքան յարատեւեացէ գոյութիւն նորա ի նոր-նախիջեւան

1. Տես Այվազեանի Խալիբեան դպրոցի պատմութիւնը, էջ (32 - 37):
 2. Պառավարութեան դպրոցը թէև աւելի բարձր էր քան թէ եղած ծխական դպրոցները, բայց նա կաթողիկոսի ցանկացած շէնք: Կաթողիկոսը ցանկանում էր դպրանոց բանալ:

1. Կոնդակ Գէորգ Գ-ի տունը յանուն հասարակութեան հայոց նորոյն նախիջեւանի յ13 սեպտ. 1873 ամի:

քաղաքի և զվերանորոգութիւն յիշեալ տան, զոր հարկաւոր ծանիցէ ուսումնական վարչութիւն ևս և զկարեւոր յաւելուածս ի նմին տան՝ առ ի յարմարեցուցանել զայն ըստ նշանակութեան առնել ի քաղաքական գումարաց. նաև ի դէպս պակասութեան թուոյ աշակերտաց ուսանողաց ի դպրանոցին ի հաշիւ հասարակութեան զհարկաւոր գումար դրամաց վասն պահպանութեան քսան թողակաւոր աշակերտաց, Վաթուղիկոսը հաճութեամբ ընդունեց հասարակութեան այդ խնդիրը և խոստացաւ զբարանոցի կանոնադրութիւնը պատրաստել և տէրութեան հաստատութեան ուղարկել: Ահա այստեղից ծագեցաւ նախիջևանում թեմական դպրանոց հաստատելու խնդիրը, որ իրագործուեցաւ միայն 81 թուին:

(Կը շարունակուի):

Ե. Ծ.



Մ Ե Ն Բ Ե Լ Ո Ւ Բ .

Բ ժ շ կ ու թ իւ ն եւ մ ա ն կ ա վ ա ր ժ ու թ իւ ն.— Առողջ միացը առողջ մարմնի մէջ է. առում է լատինական առածը. ուստի եւ զարմանալի չէ. եթէ մանկավարժական գործի ղեկավարները մեծ կարեց ունենան առողջարանների, բժիշկների օգնութեան իրենց գործն աղողութեամբ առաջ տանելու համար: Դեռ շատ ժամանակ չէ, որ մանկավարժութիւնը ուզում էին ծանաչել բոլորովին առանձին առարկայ, իսկ բժշկականութիւնն առանձին: Սակայն այդ երկու գիտութիւնների միջեւ եղած սերտ կապը հաստատուելուց յետոյ առողջարաններն ու բժիշկներն եւս սկսել են նետաքրքրուել մանկավարժական գործով եւ իւրովսանն նպաստել լուսատրութեան գործին համար:

Եւրոպական գրականութիւնն այդ կողմից կարող է մատնացոյց անել նշանատր գիտնականների երկերի վրայ. բայց ուուսաց գրականութիւնը համեմատաբար ղեռ շատ աղքատ է. մեր գրականութեան մասին արեւորդ իսկ է միշտը:

Սակայն չէ կարելի ասել, թէ ոուսաց առողջարանների ու բժիշկների մէջ չկան մանկավարժական գործով նետաքրքրուողներ: Դրան ապացոյց է Մոսկուայի բժշկական ժողովի մի որոշումը, որով 1894 թուի նոյեմբերից մի կարգ թուով 12, դասախօսութիւններ են տեղի ունենալու յատկապէս աշակերտական հասակ ունեցող մանուկների անդամազնական, քննաստական, ակտաքանական եւ առողջպահական կողմերն ուսումնասիրելու նպատակով: Դասախօսութիւնները կարդալու են մի քանի արդիւստրների, պրիւատ-դոցենտներ եւ բժիշկներ: Ինչպէս արում է դասախօսութիւնները առանձին ժողովածու են կազմելու բացատրել նկարներով լուսարանում:

Առողջակաւ ուսումնարան.— Եւստ երեխաներ զրկուում են նոյն իսկ մշտնակարգ ուսումից իրենց վատառողջութեան պատճառով: Որպէս զի այդպիսի երեխաներին մեծոց տրուի ուսումը շարունակելու, 1872 թուին ինդիւր էր բարձրացել հարաւային յորիմում յատուկ այդ նպատակով տղայոց զինագիծն հիմնելու մասին: Թէ եւ

1 Կոնդակ Գէորգ Դ-ի տունաւ յանուն հասարակութեան Նորոյն նախիջևանի 113 սեպտ. 1873 ամի:

իւր ժամանակին այդ առաջարկը համակրութեամբ ընդունեց շատ քաղաքների ու մամուլի կողմից, սակայն խնդրը մնաց առ կախ: Այժմ ինդիւրը նորից է յարուցուած. քանն այն է, որ մի պարոն Ա. Գ. Կուզնեցով ազգանունով, 25 հազար ռուբլի է նուիրել Եւրոպայում տղայոց զինագիծն հիմնելու նպատակով: Լրագիրներն առաջարկում են, որ այդ փողը յատկացուի վերն յիշուած նպատակին, որին կարելի է միացնել նաև 1872 թուին Եւրոպայում քաղաքային խոցերոյի նոյն այդ նպատակին յատկացրած 30,000 ռուբլին, իսկ գաւառական զեմստովլի 10,000 ռուբլին:

Մ ա ն կ ա վ ա ր ժ ա կ ա ն թ ա ն գ ա ր ա ն.— Առաջիկայ 1895 թուից թոյլ է տրուած Օրէնդուրդի ուս. շրջանի, Թուրքեստանի եւ Սիբիրի ժողովրդական դպրոցների վարչութիւններին կից հաստատել մանկավարժական թանգարաններ, այդպիսի թանգարան գոյութիւն ունի Պետերբուրգում:

Ու ի մ ա վ ա կ ա ն խ ա ղ ե ր.— Պարիզի Մորքոնում տոյն թուի յունիսի 16-ին ծերակոյտի անդամ զը—Կուրսէի նախագահութեամբ միջազգային կոնգրէս կայացաւ հին ուխտական խաղերի նմանութեամբ ըմբռնարտական խաղեր հաստատելու նպատակով: Ժողովին ներկայ էին բոլոր պետութիւններից ներկայացուցիչներ, բացի Գերմանիայից: Խաղերը պէտք է որոշ ժամանակներում նշանակուին. առաջին խաղը 1896 թուին կլինի Լոնդոնում, յաջորդը 1900 թուին Պարիզում, համաշխարային ցուցահանդէսի մեջոցին եւ այնուհետեւ կը շարունակուին ըստ կարգին:

Ու ս ու մ ն ա ր ա ն ա կ ա ն պ ի տ ո յ ք ն ե ր ի ց ու լ ց ա հ ա ն ղ է ս.— Մտադրութիւն կայ 1896 թուին Բերլինում արդիւնագործական ցուցահանդէս կազմելու: Այդտեղ մի առանձին բաժին կլինի նաև այն բոլոր առարկաների համար, որոնք կապ ունին ուսուցման գործի հետ: Այդ բաժինը բաղկացած կը լինի երկի մասից. Ա. ուսումնարանների շինուածքը եւ ուսումնարանական առողջապահութիւն. Բ. նկարչութիւն եւ ծեփագործ, եւ Գ. ամենայն տեսակ դասական սիւսոյքներ, Փիգիբական եւ քիմիական գործիքներ, դասարանների ներքին կազմութիւն, քարտէզներ, գրքուաններ, նկարներ, կաղապարներ, քնական գիտութեանց ժողովածուներ, զգեստ, տետրակներ եւլն. եւ այլն:



Վ Ի Ճ Կ Ե Գ Բ Ե Կ Ե Ն Տ Ե Ղ Ե Կ Ո Ւ Թ Ի Ի Ն Ե Ր .

Ե Ր Կ Բ Ա Յ Ե Դ Ի Ե Ջ Գ Ա Ր Ա Վ Կ Ո Ւ Թ Ի Ի Ն Ե Ր :

Մրկագնդի քնակներ թիւը հաշուում են մտաւորապէս 4,562 ¹/₂, միլիոն. այս թուից Եւրոպայում 566 միլիոն, Ասիայում 860 միլիոն, Աֆրիկէում 206 միլիոն, Ամերիկայում 125 միլիոն, Աւստրալիայում 5 միլիոն. ընդամենը 4,562 ¹/₂, միլիոն:

Ն Ի Ր Ո Պ Ա Յ Ի Ա Ջ Գ Ա Ր Ա Վ Կ Ո Ւ Թ Ի Ի Ն Ե Ր :

Սլաւոններ 402 միլիոն, որոնցից 70 միլիոն ուսներ եւ ուսմիներ են, 45,960,000 լեհեր, 8 միլիոն Բոհեմացիք, Մորաւացիք եւ Սլովակներ, 6 ¹/₂, միլիոն Սերբեր եւ Խոռովատներ, 5 միլ. Բոլղարներ, 4,460,900 Սլովենացիներ եւ 555,900 հայեր:

Ռումանական ազգեր 402 միլ. սրանցից 40 ¹/₂, միլիոն, Փրանսիացիք եւ Դաւոններ են, 51 միլիոն Իտալացիներ 2 ¹/₂, միլ. Իսպանացիք եւ Պորտուգալացիք են, 9 միլ. Ռուսներ եւ 49,000 Բեսարաբիկներ են: Գերմանական ազ-